ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԴԱ ԲԻԼԲՈՒԼՅԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ (ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՅԻՍ) ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի կատարումն 2025 թվականի փետրվարի 6-ին կնքված աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) 1.3 կետի՝ ներկայացնում եմ իմ կողմից եռամսյա (երեք ամսվա) ժամկետում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել ««Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը ՀՀ կառավարության կողմից 2025 թվականի հունվարի 16-ին N 46-Ա որոշմամբ հավանության է արժանացել, նախագծերի փաթեթը Ազգային ժողովի 2025 թվականի ապրիլի 18-ի նիստում ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ,

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Պետական գույքի վարձակալության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,

- ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի N 1063-Լ որոշման N 2 հավելվածի 5-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով մասնակցել եմ «Պետական գույքի կառավարման մասին» նոր օրենքի և հարակից օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մշակման աշխատանքներին, Նախագծերը ՀՀ ՏԿԵՆ 16.12.2024թ. թիվ

ԴԽ//40834-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, որոնք լրամշակման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմից վերադարձվել են և գտնվում են Կոմիտեում՝ քննարկման փուլում,

- մասնակցել եմ պետական գույքի կառավարման եռամյա ծրագրի և մասնավորեցման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունների կազմման վերաբերյալ ուղեցույցի մշակման աշխատանքներին,

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ««Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ««Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որոնք ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական, տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչությունների և Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի եզրակացությունների հիման վրա լրամշակվել են և կրկին ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ,

- ՀՀ կառավարության 30.01.2025թ-ի N 4 նիստի արձանագրության 28-րդ կետով ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հարապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը, որը շուտով օրենսդրությամբ սահմանված կարգով կդրվի շրջանառության մեջ:

Մշակել և Կոմիտեի նախագահի կողմից 2025 թվականի ապրիլի 4-ին հաստատվել է «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 399-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 147-Ա հրամանը:

- Մշակել և համաձայնեցման փուլում են գտնվում՝

«Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 582-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 11-ի N 367-Ա հրամանում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հրամանների նախագծերը:

Մասնակցել եմ պետական գույքի կառավարման ոլորտը կանոնակարգող, ինչպես նաև լիազորող նորմերի հստակեցման անհրաժեշտություն ունեցող ենթաօրենսդրական իրավական ակտերի ամբողջությամբ գույքագրման աշխատանքներին:

Պետական կառավարման մարմինների կողմից մշակված ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացրել եմ առաջարկություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ Կոմիտեի նախագահի, Կոմիտեի նախագահի տեղակալների և Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետի կողմից տրված բոլոր գրավոր և բանավոր հանձնարարականները:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ **ԼԻԴԱ ԲԻԼԲՈՒԼՅԱՆ**